



« 14 » հուլիսի 2009թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 92

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
4-Ի N21 ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 12-րդ կետի «դ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2009 թվականի հունիսի 24-ի N1185 գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2009 թվականի մարտի 4-ի «Բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման և բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) գնելու համար աջակցության տրամադրման և բնակարանների (բնակելի տների) հատկացման գործընթացը կազմակերպելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» N21 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանի 1-ին կետով ստեղծված բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման և բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) գնելու համար աջակցության տրամադրման և բնակարանների (բնակելի տների) հատկացման հանձնաժողովի կազմում՝

ա.«Կ.Գևորգյան - ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ» բառերը փոխարինել «Վ. Վարդանյան - ՀՀ քաղաքաշինության նախարար» բառերով.

բ.«Կ.Առաքելյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական» բառերը փոխարինել «Կ.Տոնոյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական» բառերով.

գ.«Ե.Աթայան - ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային և կոմունալ քաղաքականության վարչության պետ» բառերը փոխարինել «Ե.Աթայան - ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային ապահովման, բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ քաղաքականության վարչության պետ» բառերով:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում են անձամբ:

Նախարար՝

Վ.Վարդանյան

« 14 » հուլիսի 2009թ.

ք.Երևան